

# 40. ՉԱՉԱԼ ՍԻՐՈՆ

Կէլնի, կէլնի մեյ խատ թաքավոր: Էսա թաքավորուն կէլնի իրեքյ խատ լաճ:

Մեկ օր էսա թաքավոր կառնի ուր կնիկ, կէրթա ֆռալ: Ուր ասքյրներն էլ սալամի կկայնեն, որ չուր թաքավոր ֆռալուց տառնա:

Էսա թաքավոր բիրտան կտիսնա, որ էրկնքյից սև ամբ կէճնի, կէճնի՜, կէճնի՜ բիրտան կվերցվի: Թաքավոր կտիսնա, որ ուր կնիկ չընկա. էտա ամբ առեց, պանցրացավ ուր կնիկ:

Թաքավոր որ կտիսնա էսա պան, կշիվարի, կմնա: Կաչկի, կաչկի, որ կնիյ բալքյի գյա, կտիսնա, որ չէ՝ զատ չկա: Կտառնա տխուր կուգյա տուն:

Մատրազամներ, ասքյրներ կտիսնան, որ թաքավոր տխուր տուն կուգյա, կնիյն էլ խետ չի:

Մատրազամներ, վազիրներ, որ կտիսնան թաքավոր ընկնա մալուլ ի, մեկն էլ չի կիմիշկե էրթա թաքավորուն ասի, թե ի՞նչ էլե քյե:

Կմնա ընկնա քյանիմ օր էսա թաքավորու լաճեր կտիսնան, որ իրենց մեր չկա, թաքավորն էլ շատ տխուր ի: Ճոչ ախպերն ի, կասի. «Պիտի խորս տիսնամ խենքյ ինչի՞ ընկնա տխուր ի, ինան մեր մեր խենքյ տի՞ր ի, խառցուցեմ»:

Ճիչ ախպերն ի, կէլնի կէրթա թաքավորու մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ինչի՞ ընկնա տխուր ես, մեր մեր տի՞ր ի, ասա, մենքյ ինքյ քյո լաճեր, մենքյ որ ճար չանինքյ, մարթ չի կանա անե:

Թաքավորն ի, կայաթ պարկացած կէլնի, մեկ սիլա կչափի էսա ճոչ տղի իրիսի մեչ, կասի. - Կնա, տյու ի՞նչ ես, որ իմ դարդին կանաս դարման անե:

Էսա ճիչ լաճն ի, էլ լեզյու չկանա թոճե, համան փեշեր կժողվի, խոր էօդիս կէլնի տյուս, կէրթա ախպերներաց մոտ հալիեքսաթ կպատմի:

Օրթանջի ախպերն ի, ճիչ ախպոր կասի. - Կայնի ես էրթամ, տյու չես կառցե խորոտ վարվե, ինքյ պարկացած, տյու էլ տվեր ես խետ, զաթի բիս-բիթիւն ավիրեր ես:

Օրթանջի ախպերն ի, կէլնի կէրթա մոտ թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ախր քյե ի՞նչ էլե, որ ըսկնա մալուլ իա, մե մերն էլ էսա իրեքյ օր ի, որ չկա: Մեյ պան կա, ասա, մենքյ ինքյ քյո լաճեր, մենքյ որ քյո դարտին դարման չէլնենքյ, մարթ չի կանա:

Թաքավորն ի, մեյ խատ թարս-թարս կիրիշկա, կտառնա վեր կէլնի, մեկ սիլա էլ իտոր իրեսի մեչ կուտա, կասի. - Դե՛ ջայինամ էլի կնա, տյու ի՛նչ կանաս անե, քյո ճիչ ախպեր ինչ կառցավ արեր էր, մնայ տյու:

Էսա լաճն էլ փոր-փեռշման կտառնա կուգյա ախպերներաց մոտ, կպատմի հալեթաթ:

Պստիկ ախպերն ի, կասի. - Տյու չեքյ կիտե վարվել իմ խոր խետ, տյուք սաբր արեք, տեսեքյ ես ի՞նչխ բիթուն պան կխասկնամ:

Էրկու ճիչ ախպերներ կասին. - Խա, մենք զըրացիյենք, մկա տյու կնա, կնա մեկ-էրկու սիլա էլ տյու կե, ետ տառցի, որ խելքյ գյա գյլեռխտ:

Էսա պստիկ ախպերն ի, կէլնի կէրթա մոտ թաքավոր, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ախր քյո դարտ ի՞նչ ի, պիտի ասես:

Կտառնա էլմէլ կասի. - Մեր մեր տի՞ր ի, էսա քյանի օր ի չէրնա, թաքավոր ապրած կենաս:

Թաքավորն ի, վեր կէլնի տեղիս, մեկ-էրկու սիլա մեչ իտոր իրիսին կուտա, կասի. - Տե կնա, - կտառնա կասի, - քյո էրկու ճիչ ախպերներ ինչ կառցան արին, մնայ տյու:

Էսա պստիկ լաճն ի, որ մեկ իրիսին սիլա կուտա, էն մեկել իրիսն էլ կտառցուցի, կասի. - Ինչ կանտար կուզես զարկ, թաքավոր ապրած կենաս, մենակ թե ես քյո դարտ պիտի խասկնամ, ես կիտեմ ուրիշ մարթ չկանա քյո դարտին ճար անել՝ մենակ քյո տղեյներ կանան:

Թաքավորն ի, որ կտիսնա Միրոն տեղիս իակի իրար չի դիպնի, ասես ինչխ պիպեռ, ինքյ ուր կասի. «Ես կխավատամ, որ մենակ իմ Միրոն կանա մեկ ճար անել, իմ կնիկ կնտնե»:

Էսա թաքավորն ի, կասի. «Ուրիշ ճար չկա, էլ վիրն ասեմ իմ լաճերաց կայրի»:

Կէլնի մեյ խատ ուր կտընտղի, կտառնա ուր պստիկ լաճուն՝ Միրոնին կասի. - Բալա՛մ, տողրին որ կուզես, ես տեսա որ ուրիշ մարթ իմ խելքյ չխասավ՝ քյեզնիս զատ: Ես որ էն էրկու սիլեն զարկի քյե, տեսա թե տյու ինչ տղա ես, իտոր խամար ի՛նչ որ ընցե տառցե, քյե մեյ-մեկ կպատմեմ, տիսնամ խենքյ տյու ինչ խելքյ կխասուցես:

Գյեռ մեկ-մեկ, մեյ-մեկ կասի պստիկ լաճուն, թե. - Էսօրվնիս իրեքյ օր առաճ խետ կնգյանս էլանքյ տյուս ֆռալ, էն օրն էլ քիչմ քյամի էր: Բիրտան տեսա էն դեխեն սև ամբըմ հա յավաշ-յավաշ եճավ, բիրտան քյո մերն վերուց, առեց պանցրացավ: Ես էլ հա աչկեցի, ասեցի գայիր մկա կուգյա, տեռրըմ կուգյա, տեսա՝ չէ, գյացող-մացող չկա: Ես էլ չարնաչար ետ տառցա էկա: Էսա իրեքյ օր էլավ որ իմ աչկեր ոչ քյուն

ի մտե, ոչ էլ իմ պերան կտորըմ խայի խոտ: Չիմ կիտե որ տե՞ղն իմ, վիրն ասելս իսկի չիմ կիտե: Տես, էսա իրեքյ օր ի, որ կուրիսի կնիյս, զիկ ծեզնիյ ավելի վո՛վ կա մոտ, չուր մկա ալա հիչ մեկիտ չիմ ասե ծեր մոր կուրիսվել: Նոր էսօր Իսուս Քրիստոս, քյե յի, որ կասեմ առաճին անքամ: Էն էլ ասի ինոր խամար՝ տեսա որ դամուրի պես կայնար առաճս, ասիր՝ զարկ. ի՛նչ կանտար որ կուզես, մենակ թե զիկ պիտի ասես քյո դարտ: Չուր մկա իմ էոմիրի մեչ էդ ա խաբար ասող չէր էլե զիկ: Մկա տյու կիտես, ի՞նչխ կկնդնես քյո մոր, կնդի:

Սիրոն ի, կտառնա կուգյա ուր ախպերներաց մոտ, կպատմի ի՛նչ որ ուրենց խեր ասաց ուր:

Պստիկ ախպերն ի, ճի՛չ ախպերներաց կվերուցի, կասի. - Էսօր մեր մեր կուրիսեր ի, մեյ մարթու ումուր չի իսկի էլ մեր մոր կուրիսել, մենքյ պիտի ինենքյ մեր մոր իտիվ, տո՛ր ի՝ պիտի կնդնենքյ, պիրենքյ:

Կելնին էսա ախպերներ, խոսկներ կանեն մեկ, ուրենց պատրաստութեն կտիսնան, էն մեկել օր կինեն ճամբախ: Ճամբախ ինելու օր խաբար կէօրեռխկեն ուրենց խոր, կասեն. - Հալեքաթ, մենքյ ինգյանք ճամբախ, չուր քյառսուն օր աչկի, էկանքյ՝ էկանքյ, չէկանքյ՝ կիսի որ մե մեկ պան էլիր ի, մեռեր ինքյ, կամ սպանվիր:

Էն մեկել օր իրեքյ ախպերով ծիյանքյ կքաշին, կխեծնին, կինեն ճամբախ, կէրթան:

Շատ կէրթան, քիչ կէրթան, կէրթան կխասնեն մեյ խատ տաշտի մեչ, կտիսնան, որ էդա տեղ իրեքյ խատ գյութնվար գյութան կանին: Կմոտռխասնան էսա գյութան արոռներաց մեկուն, կասին. - Ախպեր, ախպեր, տյու չտեսաքյ ըստեղիս մարթ մ'որ խետ կնիկըմ կեր՝ ընցներ:

Էսա գյութնվարն ի, կասի. - Ես չեմ կիտե, զիզնիս ճի՛չ կա, ինորիս խառսու:

Պստիկ ախպերն ի, կէրթա էն մեկել վա՛ր արոռին կխառսուցի, կասի. - Պարին քյե, խոռի ախպեր, տյու չտեսա՞ր ըստեղիս իսկի կնիյըմ, մարթըմ ընցած էլնեն:

Էսա մարթն կասի. - Աստծու պա՛ռին, աղի տղա, ես չեմ կիտե, զիզնիս ճի՛չ կա, ինոր խառսու:

Կասի, կտառնա ուր «ե՞լ, ե՞լ» կբաշլայի:

Սիրոն ի, կէրթա մեկել գյութան արոռին կասի. - Պարին քյե, խոռի ախպեր, տյու իսկի չտեսա՞ր ըստեղիս մարթ ինա՛ն կնիկ մեյդրա էրթալ:

Էսա մարթն ի, կասի. - Աստծու պա՛ռին, աղի տղա, ես չեմ կիտե ինրանս խառսու:

Էսա պատիկ տղեն ի, կտիսնա որ ինոնք կթալին վեր մեկելու, ոչ մեյն էլ դոռրի չի ասե, կվերուցի իսոնս գյութնի զնջիլ որ զանի իսոնս, համան կբռռան, կասեն. - Կայնի, կայնի ասենքյ:

Տղեն ի, կասի. - Դե ասա, քյանի շոտ ի:

Էսա գյութնվարն ի, կասի. - Աղի տղա, մենքյ տեսանքյ մեյ խատ խորոտ սիրուն կնիկըմ վիշապ առեր էր, կէրթեր: Տարավ, տարավ, էսա

պանցր սարի գյլեոխ ուր փուն: Տյուքյ փառրակ փեղ եքյ ինգյե իփն, ըսկուն փեղ ի, որ խավքյն ուր թնով, օյն ուր պոոփով չեն կանա էնփեղ էլնի, փյուքյ ի՞նչխ պիփի էրթաքյ, էնփեղիս կնիյ պիրեք: Նաֆիլա փեղ մեյքյ չարչըրվի:

Էսա իրեքյ ախպերներն ին, կառնին էփա գյութնի զնջիլ, կխեծնեն ուրենց ծիեր, կինին ճամբախ:

Կէրթան, կէրթան, կխասնեն էփա սարի փակ: Կիրիշկան կփիսնան որ աղորթմանց շատ պանցր ի: Պանցր էլնելուց սորա՝ սարն էլ պափի պես ի, ըսկուն որ մարթու խելքյ իսկի չի խասնե էնփեղ էլնել: Սարի էն մեկել կողերն էլ Սև ծով ի բիթուն:

Էսա իրեքյ ախպերներն ի, կկայնեն, մեյ խափ վարավուրփ կանեն, կփիսնան, որ չէլած պան ի: Ի՞նչխ անեն, չուր էսփեղ էկեր ին, խո փառրակ չե՞ն էրթա:

Պսփիկ ախպերն ի, կպերի էփա գյութնի զնջիլ կվերուցի մեյ խափ կթալի չուր սարի գյլեոխ: Թե որ զնջլի ծեր չանգյալ ի, կէրթա քյար կպոնի:

Սիրոն ի, կասի. - Ախպերներ, ես էսա զնջիլ կպոնեմ կէլնեմ, կէրթամ: Իրեքյ օր աչկեքյ, թե էկա՝ էկա, թե չէկա՝ կիսեք որ կամ մեռեր եմ, կամ սպանվեր եմ: Էն գյախ փյու կիփեքյ, ի՞նչխ կուզեքյ արեքյ:

Կասի, կբաշլայի էլնել վեր:

Էսա պսփիկ ախպերն ի, կպանցրանա, կէլնի վեր: Կփիսնա, որ յոթ խափ էօփա կա, էդա յոթ էօփեն մեյ փուռ կա, էփա մեյ դոնիս պիփի մփնեն էփա յոթ էօփեն: Էն մեկել դիխիս էլ կէլնի փյուս դիխ Սև ծով:

Սիրոն ի, կմփնի առնի էօփեն, կփիսնա որ ի՞նչ. մեյ խափ վիշապըմ գյլեոխ՝ փրե վեր մեյ խափ խորոփ ախչկան ծնգյան, ախչիկ գյլեոխ կաչկի:

Էսա ախչիկ, որ կփիսնա էսա լաճուն էսա էօփի մեչ, ծեռնով կանի, կասի. - Կնա՛, էլի փյուս, ա՜յ փղա, ա՜յ խողածին. խավքյն ուր թնով, օյն ուր պոոփով սփեղ չէր կանե գյե, փյու ի՞նչխ էկար:

Լաճն ի, կասի. - Տյու յավաշըմ քյո ծունգյ քյաշի, ես քյե կասեմ:

Էսա ախչիյն ի, ծունգյ որ կքյաշի էսա, լաճն ի կքյաշի թուր, մեյ դոբիս կզանի, էսա վիշապի գյլեոխ կկփրի, կթալի էն դեխ: Կփառնա էսա ախչկան ծեռ-ոտ կկապի, կթալի էնփեղ, սորա էսա ախչկան կխառնուցի, կասի. - Թաքավորու կնիյ փո՞ր ի:

Ախչիկ կասի. - Ան եզրի էօփեն ի, - սորա էսա ախչիկ կփառնա էսա լաճուն կասի, - ա՜յ փղա, վիշապին սպանեսիր, զիկ ի՞նչի իմ ծեռ-ոտ կապեսիր, էն որ ես էլ ազատվա ինոր ծեռքյիս:

Լաճն ի, կասի. - Խում կաթ ուփողին շատ չի ավափա մարթ: Ես ի՞նչ կիփեմ, բալքյի մեյ պան արիր՝ վիշապ եր փառնսավ, էն գյախ նոր ինիմ ծեռ սա՞վ:

Կասի, կէլնի կմփնի էն մեկել էօփեն:

Կմփնի էն մեկել էօփեն, կփիսնա որ էնփեդ մեյ խափ վիշապ գյլեոխ

տրե վեր մեյ խատ ախչկան ծնգյան վերեն, քյնե: Ախչիյն էլ գյլեռխ կաչկի:

Որ կտիսնա ախչիկ էսա լաճուն, ծեռնով կանի. - Ա՜յ տղա, ետ տաուցի, ա՜յ խողաճին, ափսո՜ս ես, ետ կնա: Խավքյն ուր թնով, օյն ուր պոռտով չէր կանե ըստեղ գյե, տյու ի՞նչխ էկաւ:

Էսա լաճն ի, կտառնա էսա ախչկան կասի. - Տյու ալա քյո ոտ իտոր գյլխու տկիս քյաշի, նոր ես քյե կասեմ, թե ինչխ եմ իկե:

Ախչիկ որ ծունկ կքյաշի թե չէ՝ լաճ թուր մեյ զանելուց գյլեռխ կփոթուցի, կթալի տա: Կտառնա ախչկան ծեռ-ոտ կկապի, կթալի էնտեղ, սորա կխառցուցի, կասի. - Ա՜յ ախչիկ, թաքավորու կնիկ չես կիտե տո՞ր ի:

Ախչիյն ի, կասի. - Ա՛յ կտրիճ, աւն եզրի էօտեն ի: Համաւն տյու էն ասա, զիկ ինչի՞ կապեցիր:

Լաճն ի, կասի. - Մարթուն բախտ զէլվե, մարթ խում կաթ ի խմե: Ես ի՞նչ կիտեմ, բալքյի մեյ պան արիր, վիշապ էլմը ետ պիրիր:

Կասի, կէլնի կմտնի էն մեկել էօտեն:

Լաճն ի, կմտնի էտա մեկ էօտեն, էօտի տոնիս որ կիրիշկաւ ներս, կտիսնա մեյ խատ խուռնի-խրեղեն ախչիկ վիշապի գյլեռխ առե ուր ծնգյան վերեն, գյլեռխ կաչկի, վիշապն էլ քյներ ի:

Էսա ախչիկ որ էսա լաճուն կտիսնա, ծեռնով կանի, կասի. - Կնա՜, ա՜յ տղա, ա՜յ կտրիճ, ափսոս ես տյու, - կտառնա կասի, - ա՜յ տղա, խավքյն ուր թնով, օյն ուր պոռտով ըստեղ չէր կանե գյե, տու ի՞նչխ էկաւ:

Սիրոն ի, կասի. - Ա՜յ խորոտ ախչիկ, ես քյե մեյ պան խառցուցեմ, պիտի ասես:

Ախչիյն ի, կասի. - Ասա, խողաճին կտրիճ, ի՞նչ ի քյո ուզած:

Լաճն ի, կասի. - Թաքավորու կնիկ ո՞ր էօտեն ի:

Ախչիյն ի, կասի. - Ան քյանրի էօտեն ի:

Կասի, կտառնա վիշապի գյլեռխ կկտրվի:

Սիրոն ի, կասի. - Այ խորոտ ախչիկ, ոտկերտ էտա գյլխու տկանց քյաշի, էսօր քյո ազատվելու ինան պսայվելու օրն իկեր ի:

Ախչիյն ի, կքյաշի ոտկեր յավաշըմ:

Լաճն ի, թուր կքյաշի կզանի, խեստ կզանի՝ վիշապի վիզ կիսկի գյետին: Կտառնա, թուր կառնի, վիրվի արհիյտեր կլկստի, կտնի ուր տեղ: Ախչկան ծեռ-ոտներ կկապի, կթալի էնտեղ:

Էսա ախչիյն ի, կասի. - Ա՜յ կտրիճ տղա, զիկ ինչի՞ կապեցիր:

Սիրոն ի, կասի. - Խորոտ ախչիկ, քյե կապեցի ինոր խամար, որ մարթ ասած՝ խում կաթ ի խմե, ինոր ավատսալու չի. ես ի՞նչ կիտեմ, բալքյի էլար վիշապին էլմ'էլ ետ տանցուցիր:

Կասի, կէլնի տյուս, կմտնի էն մեկել էօտեն, որտեղ որ ուր մերն ի:

Լաճն ի, տուռ կպանա որ ներս մտնի, բիրդան մոր ինան լաճու աչկեր կինեն մե մեկու, մե մեկու կճանչնան:

Մերն ի, կուզի էլնի ուր լաճուն պոնի պաքյի, չկանա տեղից իրար դեպնի:

Սիրոն կտիսնա մոր, շատ կուրախնա: Կտառնա կտիսնա որ ի՞նչ. մեյ խատ յոթ գյլխանի վիշապ գյեռ գյլեռխ տրե ուր մոր գյոքյ, քյնե, մերն էլ ինոր գյլեռխ կաչկի:

Մերն ի, կտառնա ուր լաճուն ծեռնով կանի, կասի. - Կնա, այ տղա, տյու ի՞նչխ էկար էստեղ: Խավքյն ուր թևով, օյն ուր պոռտով խողածին չէր կանա ստեդ գյեր, տյու ի՞նչխ ես իկե, - կասի, կտառնա ուր լաճուն կասի. - շոտ էլի, տյուս կնա, քյանի վիշապ քյնուց չի գարթե:

Սիրոն ի, կասի. - Մարե, ես ի՞նչխ եմ իկե, իտոր գյախ չի: Մկա ես իկեր եմ քյե պիտի ազատեմ, տանեմ: Ի՞նչխ իկեր եմ, նոր կիմնաս, - կասի, - տյու մեյ խատ ալա քյո ծունկ էտա գյլխու տկից քյաշի, որ ես իմ պան խոգյամ, նոր ես տյու խարար կուտանք:

Մերն ի, ուր ծունկ վիշապի գյլխու տկանց կքյաշի: Որ կքյաշի թե չէ՝ լաճն ի համան կքյաշի թուր, կուգյա դեխ էսա վիշապ, կբաշլայի գյլխներ բիթուն էլ կտոտել:

Սիրոն ի, վեց գյլեռխ կկտրի, կպոծնի, որ էն մեկելն էլ կտրի: Բիրդան էսա Սիրոնի մեր կխասնի էօտի պուճխից դամուրե ծողին կառնի, կտանի կթաթխի քյայխի կարսի մեչ, կպիրի կզանի վեր վիշապի քյամկին: Խետ կզանի վեր վիշապի քյամկին, վիշապ կզարթնի, Ինէլնի դեխ էսա լաճու գյլեռխ: Շատ կչարչրի, զմեն վոժ կառնի, որ պիտի խեղտի էսա լաճուն, բիրդան մեր էտա էրկթե ծողին կթալի գյետին: Խետ որ կթալի գյետին, վիշապ կթուլնա, կինի:

Լաճն ի, կառնի թուր կուգյա դեխ էսա, էտա մեյ գյլեռխն էլ կկտրի, խորոտ ջանդակն էլ կանի կիմա-կիմա, կթողնի դա:

Էսա վիշապ առաճուց թաքավորու կնգյան սովրցուցեր էր,ասեր էր, որ մեյըմ կուգյա զիկ խառցուցելու, զիկ զարթնցուցելու խամար էնա էրկթե շիշ կառնես, կտանես մեր մազալլեն, էնտեղ քյառսուն տարվան խորած կարասըմ կա, մեչ քյայանխ, էտա էրկթե շիշ կտանես կթաթխես, կպիրես կզանես իմ քյամկի վերեն, ես էն գյախ կզարթնեմ:

Իտոր խամարն էլ թաքավորու կնիյ, եփ ուր լաճ վիշապի գյլեռխ կկտրեր, տեսավ էտա շիշ, առեց կնայց թաթխեց մեչ քյայխին, իպե զարթնցուց վիշապին:

Վիշապն ասեր էր. «Վով որ զիկ սաթաշմիշ կէլնի, էտա շիշ քյայխի մեչ թաթխելուց, իմ քյամկի վերեն զարնելուց սորա, ծողին չէլնի գյետին թալես, իմ վոժ մեչ էտա չթալելուն ի»:

Իտոր խամար էր, որ թաքավորի կնիյ խետ տեսավ որ ուր լաճ նեղ ինգյավ, համան ծողին իթալ գյետին: Ինոր խամարն էլ վիշապ թուլցավ, ինգյավ, լաճ գյլեռխ կտրեց:

Լաճն ի, կմտնի էն մեկել էօտեքյն էլ կիրիշկա, կտիսնա, որ զմեն առծաթ, ոսկի, ջավահիլ, ակնունքյեղեն պան ին:

Սիրոն ի, իրեքյ օր գյախնի թմմի, ի՞նչխ անի, ի՞նչխ չանի, կէլնի

կառնի ուր մեր ինաան էտա իրեքյ ախչկներ. ինոնց ծեռ-ոտ կքյակի, կառնի խեստ ուր, որ գյան էճնեն տակ, էրթան տուն:

Սիրոն ի, կասի. «Աղեկ ի, մենքյ էլ իրեքյ ախպեր ինքյ, էսա ախչընկներն էլ իրեք ին, աղեկ ի՝ մե մեկիս մեյ խատ կխասնի»:

Զմենիչ պստիկ շատ խորոտ կէլնի: Սիրոն ի, կասի. «Էսա ես կպախեմ զիկ խամար, էն էրկուսն էլ՝ մեկ ճիչ ախպորս, մեկն էլ օրթանջուն»:

Սիրոն ի, կլչի թալիսներ բիթուն ալմաստ, ջավահիլ, խեստ ուր մոր ինան էտա ախչկներաց, կուգյա սարի գյլեոխ. նշան կուտա ախպերներաց, թե՝ ես էկա, որ էճնեն տակ:

Առաճ մոր կէճուցի տակ, որ ախպերներ զաթի կտիսնան ուրենց մոր, կթատեն վերեն, շատ կուրախնան:

Սորա կէճուցի էտա ջվալ ալմաստ, ջավահիլներ. սորա ուր ախպերներաց էրկու նշանած: Սորա սրեն որ կուգյա Սիրոնին ինան ուր նշանածին, էն ինոր կասի՝ առաճ տյու էճի, էն ինոր, ըսկուն որ մեյ մեկելու շատ կուզեն: Սիրոն էն մտկով կասի՝ տեսավ, որ իսան խում կաթ ի խմե, տեսավ որ չուր ուր մերն էլ՝ վիշապին խանեց վեր, քիչ էր մանցե, որ ուր ուտեր: Իտոր խամար չէր ավատա ախչկան, կասեր. «Վո՛վ կիտի մարթ ի, չանգյ իմ մերն էլ չէլներ, մենքյ էղնենքյ տակ, էսա ախչիկ էրթա վիշապին խանի վեր, գյա մե ստեղ բիթուն զայզաբատ անի»:

Իսկ ախչիկ յուրյուշ մտկով կասեր: Էն կիտեր, խեստ որ ինքյ էճներ տակ, ուր ախպերներ իսոր խորոտկութեն տիսնալուն պես, պիտի ասեն թե. «Տե՛ն, վա՜յ, մեր պստիկ ախպեր էսա խորոտ ախչիկ պախեց ուր խամար»: Իտոր վերեն զնջիլ քյաշին, լաճ մնա էնտեղ:

Ախչիկ տողրի էսա մտկովն էր, որ լաճուն կասեր. «Առաճ տյու էճի, նոր ես»:

Ախչիկ ինչ կանդար կանի, լաճ չի ավատա, կասի. - Չէ, սառաճ տյու էճի, սորա ես:

Ախչիկ կտիսնա, որ էլ ճար չկա, կասի. - Աղեկ, ա՜յ կտրիճ տղա, կայնի քյե ասեմ: Ես որ էճնեմ տակ, քյո ախպերներ, որ տիսնան զիկ, պիտի պախլնան քյո վերեն, պիտի ասեն. «Էսա խորոտ ախչիկ պախե ուր, էն մեկելներ տվե մե. կայնի տես ինչխ անենքյ քյո գյլեոխ»: Կասին, զնջիլ կքյաշին, տյու կմնաս էտա տեղ: Իտոր խամար, - ախչիյ կասի, - առ էսա իմ ծոցի մազ, էնգյախ կէրթաս փագյախ տուռ կպանաս, խեստ տուռ պանաս, էնտեղ կա իրեքյ խատ ծի, մեկ կարմիր, մեկ սիվտակ, էն մեկելն էլ սև: Խեստ տուռ պանաս, էսա ծիյանքյ կուգյան դեխ քյե, կուզեն քյե ուտել: Խեստ էտա մազ խանես ծոցեստ, շանց տաս, խրխնջալեն կուգյա, կկայնի քյո առաճ: Էն գյախ աչկերտ կխտես, ծին կառնի կուգյա լոս աշխար:

Սիրոն ի, կառնի էտա մազ, կտնի ծոց, ախչկան կէճուցի տակ:

Ճոչ ախպերն ի, որ կտիսնա էսա ախչկան խորոտկութեն,

կպախլանա վեր ախպոր: Կտառնա ուր օրթանջի ախպոր կասի. - Տես, էսա խորոտ ախչիկ ուր խամարն էր պախե:

Կասի, զնջիլ կքյաշի տակ, ախպոր կթողնի դա:

Ճիչ ախպերն ի, էսա պստիկ ախչիկ կառնի ուր, կտառնա մոր, ինոնց կասի. - Չէլնիմ, չիմանամ որ մեյ խարար էլնի տյուս ծեր պենիյ, ծե բիթիւնին էլ կսպանիմ: Պան ի, թե որ թաքավոր խառոյուցի ասի՝ ու՞ր է Սիրոն, ասեքյ՝ ինգյավ տակ սարիյ, մեռավ:

Կէլնեն ուրենց ծիեր կխեծնեն, կինեն ճամբախ, կէրթան: Կէրթան կխասնին տուն:

Թաքավորն ի, որ կտիսնա ուր կնիկ պերին ուր լաճեր, շատ կուրախնա, քյեոֆ-ուրախութեն կանեն, կուտեն, կխմին: Բիրդան թաքավոր կտիսնա, որ ուր Սիրոն, պստիկ լաճ, չկա, կխառոյուցի, կասի. - Ու՞ր ի Սիրոն:

Կասին. - Սարիյ ինգյավ տակ, մեռավ:

Թաքավորն ի, կտիսնա որ Սիրոն չկա, շատ կմոթի: Սորա կասի. - Էսա ախչկներ վո՞վ ին:

Ճիչ ախպերն ի մեյ-մեկ, մեյ-մեկ կպատմի թաքավորին, կասի. - Իսոնք էլ վիշապներու մեչեն ազատեցինքյ պիրինքյ, որ պսայվինքյ իսոնց խետ, - կտառնա կասի, - են մեյն էլ, մենքյ քյոր չունենքյ, կանենք մե քյեոր:

Սիրոն ի, կտիսնա, որ ուր ախպերներ նամարդութեն արին խետ ուր, ուր ցավ կիսկի ուր ատամ, կմնա էնտեղ: Քիչըմ կմտածի վեր ուր հալին, սորա բիրդան պստիկ ախչկան տված մազ կինի միտ, կէլնի կէրթա: Կէրթա փայխի տյուտ կպանու, որ չըպանա՝ էսա ծիյանքյ կուգյան դիխ էսա լաճ, քիչ ի մնացե, որ առնեն ուրաց տակ: Բիրդան ախչկան ծամ կխանի տյուս թե չէ՝ սև ծին խրխնջալեն կուգյա կկայնի էսա լաճու առաճ:

Լաճն ի, կխեծնի սե ծին, կասի. - Իմ մարալ, զիկ խան լիս աշխար: Աչկեր կկոծի, կպանա՝ կտիսնա որ էլեր ի լիս աշխար: Կէլնի խոդի իրես թե չէ՝ ծին պայ կթողնի, կասի. - Որտեղիս էկար՝ կնա էնտեղ:

Ծին բիրդան կկուրիսի:

Սիրոն ի, որ կէլնի խոդի իրես, կմտածի, կասի՝ ի՞նչ անեմ: Կէրթա, կէրթա, կխասնի դաշտի մեչ: Կտիսնա որ խոդվիվըմ ոչխարներ իսկե առաճ, կտանի: Կէրթա կմոտոխանա խովըվուն, կասի. - Ախպե՛ր, ախպե՛ր, մեյ խատ զիկ պարակ ոչխրի փոր տուր:

Խովիվն ի, կխանի ուր տոպրկիյ մեյ խատ պարակ ոչխրի փոր, կխանի կուտա իսոր, էլ մ'ոչխրներ կէսկի առաճ, կէրթա:

Լաճն ի, կառնի էսա փոի, կքյաշի ուր գյլեոխ, կտառնա մեյ խատ չաչալ, կէրթա:

Կէրթա, կէրթա, կխասնի քյաղաքյըմ: Վիր մոտ օր կէրթա, կասի՝ զիկ առեքյ ծեր մոտ աշկեռտ, մեյ մարթ չի առնե: Կասեն՝ «Չաչալ, քյե առնենքյ, ի՞նչ անենքյ»: Կէրթա, կէրթա մեյ տյուքյանի տուտ կպանա,

կտիսնա ոսկրճու տյուքյան, կասի. - Ախպեր, ախպեր, գյամ քյո մոտ աշկեոտ:

Էսա ոսկրիճն ի, կասի. - Չաչալ, քյե ի՞նչ անեմ: Տյու ի՞նչ կիտես, որ ես քյե առնեմ մոտ զիկ աշկեոտ:

Էսա լաճն ի, շատ աղաճանքյ կենի, կասի. - Ի՞նչ կէլնի, խաց պերան էլ կուգյամ, պան չկա, խեղճ եմ, անտեր-անտիրական եմ, տեր չունեմ, ինչ կէլնի:

Էսա ոսկրիճն ի, կտիսնա, որ խեղճ տղա յի, սիրտ կյավա վերեն, կասի. - Դե արի խենքյ, չաչալ, արի խենքյ ինչ պիտի անես:

Էսա լաճն ի, շատ շնորհակալ կէլնի, կէրթա կնստի տյուքյան, կէլնի իսոր աշկեոտ:

Թաքավորն ի, օրն իկե որ ուր տղեյներաց պիտի պսակի:

Կկանչի ինչ կանդար որ սադրազամ կա, նազիր-վազիր կա, բիթուն էլ խարսնիս:

Ճոչ տղի պսայվելու օր՝ պստիկ ախպոր նշանած ախչիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, պսայվելուց առաճ ես էրկու խնդիրքյ ունեմ, էդս խնդիրքյ կատարի, որ նոր պսայվեմ խետ քյո լաճուն:

Թաքավորն ի, կասի. - Ասա, բալամ, ի՞նչ ի քյո խնդիրքյ:

Ախչիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իմ մեկ խնդիրքյ էսա յի որ, ես կուզեմ իրեքյ օր քյո քյաղքյի մեչ ինչ կանդար որ ծիյավոր կան, գյան քյո սարի առաճ ձի խաղան, մենքյ տիսնանքյ:

Թաքավորն ի, կասի. - Բալամ, էտա էլ պա՞ն ի:

Ամր կանի, տալլներաց կուտան կանչել թե՝ զմեն մարթ, ինչ կանդար որ ծիյավոր կա, պիտի գյան իմ սարի առաճ ծի խաղան:

Էն մեկել օր յաղամաթ կթավի, ծի խաղցողներ բիթուն էկեր ին ժողվեր են թաքավորի սարի առաճ, բաշլայեր են խաղալ:

Էսա չաչլու ուսթեն ի, կէլնի ուր աշկոտին կասի. - Չաչալ, Չաչալ, կնա ծիյուն խորոտ գորմ տուր որ էրթամ ավզնոց, էսօր ավզնոց կա:

Էսա չաչալն ի, կուգյա ծիյուն գորմ տալու տեղ, ծիյու պերան կկապի առեքյ, կուգյա ուսթին կասի. - Ուսթա, ըսկուն իմ կերիկուցե ծիյուդ, որ խետ էրթաս մեյդան պիտի առնի:

Քիչըմ կմնան՝ էսա ուսթեն ի, կասի. - Չաչալ, Չաչալ, կնա ծին առ, արի անգյան ի:

Չաչալն ի, կէրթա ծին կթամքյի, կառնի կուգյա:

Ուսթեն ի, կխեծնի ծին, հայդե բաբամ, կէրթա չուր թաքավորու սարի տրան առաճ:

Էսա Չաչալն ի, կինի ուսթի իտև, կասի. - Ուսթա, ուսթա, ես էլ գյամ, ի՞նչ կէլնի, ես էլ գյամ, մեյ կողի խետ կկայնեմ, թամաշա կանեմ:

Էսա ուսթեն ի, կասի. - Չէ, չէ Չաչալ, որ տեղ գյաս, գյաս ինես ծիյանըտերաց ոտաց տակ, ինենքյ կրակ:

Էսա չաչալն ի՝ ուսթեն քիչըմ կզատանա թե չէ՝ կխանի ծոցից էն ախչկան ծամ, կուտա կրակ, կասի. «Միվտակ ծի, քյո թախմներով իմ առնաճ կուզեմ»:

Աչկ կխփի, կպանա՝ կտիսնա ի՞նչ. սիվտակ ծին գյեռ հագր առած կայնե: Կխայնի խալվներ, կխեծնի, յալա՜, չհիտ թաքավորու սարի առած:

Խաղ զաթի պաշլայեր ին: Էսա լաճն ի, կէրթա էն գյլեռխ, կուգյա էսա գյլեռխ, մեյ մարթ գերիշմիշ չէլնի իսոր ջրինդի առած գյա: Կխաղա, կխաղա, կէրթա կզանի թաքավորու ճիչ լաճու արախչին գյլխոպ կթռուցի, իսոր կզանի ջրինդով, ինոր կզանի: Կդառնա կուգյա ուսթին մեյ խատ կզանի կողի մեչ, կընցնի կէրթա:

Խաղ խետ կդադրի թե չէ՝ էսա չաչալ ուր ծին կթողնի պաց: Կասի. «Մարալ, ո՛ր տեղիս էկար, էլ մ'էլ կնա էնտեղ»: Ծին կդնի ճամխու, կուգյա ուր կաշին կքաշի գյլեռխ, կնստի ուր տեղ:

Թաքավոր ուր վազրներ կզարմանան էսա լաճու ծի քշելու վերեն:

Թաքավորու ճիչ լաճու կնիյն ի, կտիսնա էսա զմեն, ինք ուր կասի. «Իմ Սիրոն ի, էն իմ Սիրոն, մեռնիմ իմ ջեյրան Սիրոյին»:

Էսա ոսկրիճ ուսթեն ի, էն մեկել օր թոփալ-թոփալ կէլնի կուգյա տյուքյան:

Չաչալն ի, կխառոյուցի, կասի. - Ուսթա, էրեկ ի՞նչխ էր, մեյդան վիր մնայ:

Էսա ուսթեն ի, կասի. - Չաչալ, մեյ խատ շուն շանորդի ծի քշողըմ կեր, վա՜յ քյո տուն ավերի խետ քյո ծի քշելուն, կասես թե խրեշտակ էր կթռներ: Շու-շան որտին մեյ խատ էլ ըսկուն իզարկ մեչ կողիս, որ ալա չուր մկա կյավա:

Էն մեկել օր էլ մ'էլ կէրթան:

Ուսթեն ի, կասի. - Էսօրն էլ պիտի էրթամ, տիսնամ խենքյ էն տղեն էլ կուգյա՞:

Կասի, ծին կքյաշի կխեծնի, յալա:

Չաչալն ի, կտիսնա, որ ուսթեն կնայ: Կէլնի, ծոյիյ մազ կխանի, կուտա կրակ, կասի. «Էսօր էլ տյու արի, կարմիր-կապոտ կող ծի, քյո թախմներով»:

Աչկեր կխփի, կպանա, կտիսնա որ կապոտ կող ծին ուր սանթանաթներով ուր առած կայներ ի:

Կխայնի կարմիր խալվներ, կխեծնի կարմիր ծին, յալա, կքշի չհիտ թաքավորու սարեն:

Թաքավորու խարսն ի, տեսնջարիյ կտիսնա, որ Սիրոն կարմիր ծին խեծե, դումանի մեչ կուգյա:

Չաչալն ի՝ կուգյա թե չէ՝ էլ մեյ մարթ չի կայնի մեյդան:

Չաչալ կէրթա կուգյա, ծին կխաղցուցի, իսոր ջրնդով կզանի, ինոր կզանի, մեյ խատ էլ կտանի, կպիրի կուտա թաքավորու օրթանջի լաճու ակնջի մեչ: Սորա կուգյա մեյ խատ էլ կուտա ուր ուսթի գյլխու մեչ, կթողնի մեչ դումանին կկուրիսի: Էսա ժաղամաթի պերան քիթհուն կմնա պաց, կասեն. «Էսա ի՞նչ էր, էսա խրեղեն խա՜վքյ էր, էկավ կնայ»: Թաքավոր ինան ուր սադրազմներն էլ կզարմանան էսա պանի վերեն:

Չաչալն ի, կէրթա ուր ծին կթողնի պայ, կասի. «Իմ ջեյրան, որ տեղից էկար, էլմ'ել կնա էնտեղ»: Ծին ճամխու կտնի, կուգյա էլ մ'էլ ուր կտակ կքյաշի գյլեոխ, կնստի ուր պանին:

Առատուն էաա ուսթեն ի, գյլեոխ կապած կուգյա տյուքյան:

Չաչալն ի, էլ մ'էլ կխառոյուցի, կասի. - Ուսթա, էսօր ավզնոց ի՞նչխ էր, մեյդան վի՞ր մնայ:

Ուսթեն ի, կասի. - Չաչալ, քյո ի՛նչ պան ի, զմեն օր կխառոյուցես եաա:

Չաչալն ի, կասի. - Ի՞նչ կէլնի, ուսթա, խառոյուցել խո ասմոթ չի:

Ուսթեն ի, կասի. - Չաչալ, էլ ի՛նչ ասեմ, անպատմելի յի, մեյ խաստ շու շանորտիմ' կա, էսա էրկու օր ի փասյտա յի էլե, որ մարթ չի կանա խետ գյլեոխ էլնե: Էսօրն էլ իզարկ թաքասվորու օրթանջի լաճու ակնչի մեչ, ծիյուց պիրեց տակ, էրեկն էլ իզարկ ճիչ լաճու արախչին իպե տակ: Շու շանորտին էլ մարթ չտեսավ, զիկ տեսավ, էկասվ մեյ խատ էլ իտոր մեչ իմ գյլխուն: Չաչալ, կիտես, էսօր էլ նոր ծիմ' էր խեծե, կասրմիր-կապոտ ծիմ' էր որ. վա՜յ քյո տուն ասվիրի՝ խետ քյո ծիյուն, ջեյրան էր, ջեյրան: Շու շանորտին զաթի զինքյ էլ քշող ի, հա: Չաչալ, ես ալա մեչ իմ յումրին ընկնա ծիյավարժ չի տեսե: Համասն, չաչալ, գյլեոխս շատ կցավա:

Սեկ օր ի մնայե, որ ավզնոց պոծնի, որ թաքավոր ուր տղեյներ պաակի:

Էն մեկել օրն էլ ժաղամաթ բիթուն կթափի կուգյա թաքավորու սարի դռան առաճ: Ծի քշողներ իկեր ին, շարվեր ին խպատտ-խպատտ:

Թաքավորն էլ ուր ադրազամներով, վազրներով, խետ ուր խարսերայ կայներ ի քյեոշկի փենջարեն կիրիշկա:

Էսա ուսթեն ի, թոփալ-մոփալ կէլնի, կասի. - Չաչալ, կնա էսօրն էլ պե ծիս, ջայինամ, էսօրն էլ կէրթամ: Էրթամ տիսնամ խենքյ էն շու շանորտին էսօր ի՞նչ քյեշիտ ծիյով կուգյա: Խենքյ էսօր վիր պիտի զանի:

Չաչալն ի, կէրթա ծին կպերի:

Էսա ուսթեն ի, ծին խեծե, որ պիտի էրթա: Էսա Չաչալ էլ մ'էլ աղաճանքյ կէնի, կասի. - Ուսթա, ուսթա, ի՞նչ կէլնի էսօր մեյ խատ ես գյամ տիսնամ էտա մարթուն, խենքյ ի՞նչխ ծի .կքշի:

Ուսթեն ի, կասի. - Շու շանո՛րտի Չաչալ, գյաս ինես ծիյահտերայ ոտաս տակ, էնեմ բալա, չէլնի գյաս՝ աչկերտ կխանեմ, - կասի, - ծին քշի, կէրթա:

Չաչալն ի, կտիսնա խետ ուր ուսթեն կնայ, յավաշըմ ծոյիյ կխանի ախչկան ծամ, կուտա կրակ, կասի. «Էսօր էլ տյու արէ սև սաթ, խրեղեն ծի, քյո թար-թախմներով»:

Աչկեր կխտի, կպանա թե չէ՝ սե սաթ խրեղեն ծին ուր թախմներով կուգյա, կկայնի էաա չաչկե առաճ:

Չաչլիկն ի, կխանի ուր գյլխուն կաշին, կխայնի սև խալվներ կէլնի, կխեծնի ծին, ջրինդ կպոնի ծեռ, հայդե բաբամ՝ կքշի:

Թաքավորու խարս նստե քյեռշկի փենջարեն, ուրիշ մարթու հիչ չիրիշկա, մեկն էլ ուր աչիչ չի գյա, մենակ Սիրոն ի, որ կասես թե ուր ջան ջիգյարն ի, գյեռ նստրե փենջարեն ինոր կաչկի, կասի՝ խենքյ Սիրոն եփ կուգյա:

Մեկել կտիսնա, որ Սիրոն են դիխիչ սև սաթ ծին խեծե թեռգ վ դումանի մեչեն խառ քշելով կուգյա:

Սիրոն ի, կքշի են գյլխուչ, կերթա են մեկել գյլեռխ, կուգյա: Ժաղամաթ մունջ շշկոեր ին, մնայեր ին էսա լաճու մի քշելու վերեն: Սիրոն ի, կերթա են գյլեռխ, կուգյա էսա գյլեռխ, ինոր ջրինդով կզանի, ինոր գյլխու արախչին կթռուցի: Վարհասլ, ըսկուն կանի մեյդան, որ բիթիունն էլ կասեն՝ էսա մարթու պան չի, էսա սատանի պան ի:

Թաքավոր ինան վազիրներ զաթի պոծի, պոծի թերոիր են, մնայեր են:

Կքշեն, կքշեն, էսա սև ծիյովն ի, կերթա կուգյա մեյ խատ ջրինդ կէօլեռխնի դիխ թաքավորու լաճուն: Խեստ էօլեռխնելուն կերթա, կդեպնի դոդրի լաճու մեճայ մեչ, համան ծիյուչ կուգյա տակ:

Կերթա, կուգյա էսա սև ծիյովն ի մեյ խատ էլ կզանի էսա ուսթին, խեստ կզանի էս էլ ծիյուչ տընկրոմընկրո ծիյուչ կուգյա վեր քյալին: Կքշի կերթա են գյլեռխ կուգյա էսա գյլեռխ, հայդե բաբամ, կքշի դումանի մեջ կկուրիսի:

Էսա Չաչալն ի՝, կուգյա շորեր կխանի՝ կտառնա ծիյուն կդնի ճամխու, կասի. «Իմ սև սաթ ջեյրան, որտեղիչ որ էկար, էլ մ'էլ կնա էնտեղ»:

Ծիյուն կճամխի, ուր չաչլու կաշին գյնա կքյաշի գյլեռխ, կերթա, կնստի տյուքյանն ուր պանին:

Առատուն էսա ուսթեն ի, կողեր-մողեր ճարտված, թոփալ-մոփալ կուգյա տյուքյան:

Չաչալն ի, որ կտիսնա ուր ուսթի հալ՝ քյթի տկանչ կծծղա, կասի. - Ուսթա, էրեկ ի՞նչխ էր մեյդան, էլ մ'էլ են տղեն իկեր էր աջեբա:

Ուսթեն ի, տրյիտրքյալեն կասի. - Ի՞նչ կուզես, չաչալ գյադա, ես ի՞նչ անեմ, ի՞նչ ասեմ քյե:

Չաչալն ի, կասի. - Ուսթա, մեյ խատ պատմի, խենքյ, սորա մեյդան վիր մնայ, ի՞նչխ էլավ:

Էսա ուսթեն ի, կասի. - Էլ ի՞նչ պատմեմ, անպատմելիք պան ի: Էն շու շանորտին էսօր էլ մեյ խատ սև սաթ ծի մ'էր խեծե, որ էլ ինչ ասեմ, կասես գյեռ մեչ էրկինքյ մեչ գյետին քշած էլնի: Ախր, բիթիուն ժաղամաթ զարմացան էսա լաճու վերեն: Թաքավորու տղեն թե փռթավ մեյ խատ տյուս էկավ, վալա, ինգյավ իտև, զարկեց իպե ցածր: Ես էլ ասի մեյ խատ էլնեմ քշեմ: Ես էլ ասի մեյ խատ էլնեմ քշեմ: Ես իմ քշել կիցա: Խասավ իտև, իզարկ ըսկուն մեչ կողիս, որ ալա չիուր մկա կսանջյուչի: Որ են սարտի խեստ զաներ ծիյուս, ծին անպատճառ կխատներ: Գյեռ ըսկնա չաչալ, անպատմելի պան: Սորա քշեց մեչ դիուանին, կտրիսավ:

Չաչլիկն ի, կասի. - Ուսթա, ի՞նչ կէլներ, որ զիկ էլ մեյ խատ տանիր. տեսնի էտա մարթուն, որ իտականդար մաթ կանես:

Ուսթեն ի, կասի. - Շուն տղա չնչլիկ, քյե տանի, ինի քյո ծեռ կրակ, ծի յի քշեսյին, ինգյար ոտաց տակ, էն գյախ ի՞նչ պիտի անի, չաժածդ ջան արնգյի՞ն էլներ վերես:

Թաքավորն ի, որ ավզնոց կպոծնի, կկանչի ուր խարսնացուն, կասի. - Քալամ, քյո ուզած էսա չէ՞ր, էլ ի՞նչ կուզես:

Էսա ախչիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իմ մեկ խնդիրքյ էսա էր:

Թաքավոր կասի. - Մեկն ո՛րն ի, էն էլ ասա:

Ախչիյն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իմ մեկ խնդիրքյ էլ էսա ի, որ մեյ խատ ոսկուց թաբախ տաս շինել, մեչն էլ ոսկի եղունիկներ էլնեն: Ըսկուն շինել տաս, որ էտա եղունիկներ թափսի մեչ էրթան էն դիխ, գյան էն դիխ: Էսա որ շինել տվիր, նոր ես կպսայվեմ:

Թաքավորն ի, կկանչի ուր քյաղքյի մեչ ինչ կանդար որ ոսկրիճ կա, կասի. - Ըսկնա պանմ կա, ի՞նչ կանեքյ, պիտի շինեքյ մեկ օրվան մեչ պիրեքյ զիկ:

Ուսթեքն ի, թալին կպոնին, ի՞նչխ կանին, անկարելի կէլնի շինել: Կէրթան թաքավորի մոտ, կասեն. - Թաքավոր ապրած կենաս, քյո ուզած մենքյ չենքյ կանա շինե. էտա թե որ շինի, մենակ թոտալ ուսթեն կանա շինե:

Թաքավորն ի, ամր կանի, կասի. - Էտա թոտալ ուսթեն վո՞վ ի, կանչեքյ:

Կէրթան կկանչին, կպիրին թոտալ ուսթին: Կասեն. - Արի, թաքավոր քյե կկանչի:

Էսա թոտալ ուսթեն ի, շատ կվախնա, կասի. «Աջերա թաքավոր զիկ ինչի՞ պիտի կանչի», կասի, կէլնի չարնաչար կէրթա թաքավորի մոտ:

Կէրթա թաքավորի մոտ, կասի. - Թաքավոր ապրած կենաս, զիկ ինչի՞ ես կանչե:

Թաքավորն ի, կասի. - Ես ըսկնա պա մը պիտի տամ շինել, կանչեցի ինչ կանդար որ ուսթա կեր քյաղքյի մեչ՝ ոչ մեյն էլ խելքյ չկառցավ խասուցեր: Մորա ասին, թե մենակ թոտալ ուսթեն թե շինի՝ ինոր պան ի: Իտոր խամար քյե կանչեցի, որ չուր վանդ՝ շինես տաս: Շինեցիր՝ շինեցիր, չշինեցիր՝ քյե կկախեմ:

Էսա ուսթեն ի, կմտածի, ի՞նչխ անի, ի՞նչխ չանի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, իմ խելքյ չի խասնե իտոր շինելեն:

Թաքավորն ի, կասի. - Ես չեմ կիտեր, չուր վանդն էսա գյախ՝ ես քյեզնիյ կուզեմ, ի՞նչխ կիտես, ըսկուն արա՝ թե չէ, քյե կկախեմ:

Էսա ուսթեն ի, կտիսնա, որ թաքավոր ուր ասածի վերեն կայներ ի, ճար չկա, կէլնի տրտում-մալուլ, փեռ-փեռշման կուգյա դյուքան:

Էսա չանչլիկն ի, որ կտիսնա որ ուր ուսթեն մալուլ ի, կասի. - Ուսթա, ի՞նչ էլե քյե, չէլնի թաքավոր քյե պամ՝ ասե:

Ուսթեն ի, կպարկանա վեր էսա Չաչլըկեն, կասի. - Շան փղա, խերիքյ ի, հա զիկ գյեժոյուցես, քյո ինչ պան ի, հա կխաոյուցես:

Չաչլիկն ի, կտիսնա որ ուր ուսթեն հա մտածմունքյի մեչ ի, էլմ'էլ կկպնի ուսթի յախեն, կասի. - Ախր ուսթա, քյե ի՞նչ էլիր ի, զիկ ասա, բալքի ես կանամ քյե յարամիշ էլնե:

Էսա ուսթեն ի, կտիսնա, որ էսա չաչլիկ հա իսկե գյլեոխ, կասի, կասի. «Շան փղա, կայնե ասիմ, տիսնամ խենքյ տյու զիկ ի՞նչ կանաս յարամիշ էլնե»:

Կբաշլայի ասել, կասի. - Չաչլիկ, կիտես զիկ թաքավոր ինչի՞ կանչեց:

Չաչլիկն ի, կասի. - Ինչի՞ ուսթա:

Ուսթեն ի, կասի. - Թաքավոր զիկ կանչեց ասաց. «Մեյ խատ ըսկուն խորոտ ոսկուց թափսիմ պիտի շինես, էտա թափսու մեչն էլ երկու խատ խորոտ ոսկուց եղունիկ, ըսկուն շինես էտա եղունկներ, որ էտա թափսու մեչ էրթան էն դիխ, գյան էն դիխ»: Բիթուն քյաղքյի ուսթեքյ կանչեր էր, ինոնք չեն կառցե: Զիկ էլ կանչեց ասաց. դառցավ ասաց. «Թե որ չուր վաղն իրիկուն չշինես տաս, քյե կկախեմ»: Մկա գյեռ էսա բալի մեչն եմ ինգյե, տյու զիկ ի՞նչխ յարամիշ կանաս էլնե, որ հա կպեր ես յախես, կասես՝ ասա, ասա, ես յարամիշ կէլնեմ: Չաչլիկ գյեռ էսա ի թաքավորու ամր:

Չաչլիկն ի, մեյ խատ կծծղա, կասի. - Ուսթա, տյու մառախ մ'անե, էտ էլ պա՞ն ի, որ կմտածես: Ես կշինեմ, քյե սիվտակ երես կանեմ թաքավորի առաճ:

Էսա ուսթեն ի, կասի. - Շան փղա Չաչլիկ, տյու ի՞նչ կանաս անե, ես կիտեմ տյու ինչ կանաս շինե, էսա մեյ տարի էլավ տյու մոտ զիկ ես, ես չե՞մ կիտե քյո ծեռնեն ի՞նչ կուգյա: Ալա էտա թողնենքյ, ես զաթի իմ յումրի մեչ էտասկնա պան իսկի չեմ շինե, տյու որտեղի՞ց կանաս շինե՝ չտեսած:

Չաչլիկն ի, կասի. - Ուսթա, իսկի չէլնի՞ որ աշկեոտ ուսթիս խորոտ պան կիտնա:

Ուսթեն ի, կասի. - Իմ խելքյ չի խասնի, Չաչլիկ, տյուն էլ զիկ խայտառակ պիտի անես:

Չաչլիկն ի, կասի. - Ուսթա, չէ, տյու ոսկին տուր, տես ես էսա կիշրվան մեչ չուր լոս տես ինչխ կշինեմ: Կիշիր կշինեմ, առատուն հուզր կանեմ, առատուն կառնես կէրթաս թաքավորու մոտ, կուտաս ինոր, համան իմ պաշխիշ չմոռնաս:

Էսա ուսթեն ի, կտիսնա, որ ուրիշ ճար չկա, ուր ծեռնեն էլ չի գյա, կասի. - Աղեկ, Չաչլիկ, կուտամ ոսկին տիսնամ, խենքյ ի՞նչ պիտի անես. խենքյ տանճ պիտի անե՞ս, խնճեոր, թե չէ՝ ի՞նչխ պիտի անես:

Կասի, ոսկի կուտա, կասի. - Դե առ, խենքյ պիտի շինես, Չաչլիկ, - կտառնա, կասի, - Չաչլիկ, համա որ չկառցար շինիր, էտա քյո չաչալ գյլեոխ իմ ծեռնիս չփոթնե, ես էլ քյե պիտի կախեմ:

Զուչլիկն ի, կասի. - Խա, ուսթա, թե որ չկաոցա շինի, փյու իմ գյլեոխ զարկ:

Կասի, ոսկին կառնի, կբաշլայի խալիլ: Սորա կտառնա ուսթին կասի. - Ուսթա, զիկ մեկ էօխկա պնդյուկ պե, որ կիշեր մեյ թարաֆեն շինեմ, մեյ թարաֆեն ուտեմ:

Ուսթեն ի, կասի. - Շան տղա, Զաչալ, փյու շինի, ես քյե տաս էօխկա կառնեմ:

Զաչալն ի, կասի. - Զե, փյու զիկ մեկ էօխկա առ, խերիքյ ի:

Ուսթեն ի, Զաչլիկի ուզածներ բիթուն կառնի, կուտա խեստ ոսկուն, կասի. - Դե առ, ի՞նչ կիտես, ըսկուն արա:

Էսա Զաչլիկն ի, կառնի ոսկին ինաւն պնդյուկ, կերթա ուր էօդեն, կբաշլայի շինել:

Կիշերն ի, էսա ուսթեն կասի. «Մեյ խատ երթամ տիսնամ խենքյ էսա Զաչլիկ ի՞նչ կանի, աղորթ, կշինի, թե չէ՝ ուր խասպես»:

Կերթա էսա չաչլու էօդի դռան դարզերաց գյախտիկ կիրիշկա ներս՝ կտիսնա, որ ի՞նչ. Զաչլիկ գյեռ մկրատ առի էտա ոսկիքյ բիթուն կկտռտի, մեյ թարաֆից էլ պնդյուկ կկոտռտի կուտի:

Էսա ուսթեն ի, կտիսնա, որ Զաչլիկ մեյ պան էլ չի անե, տուռ կպանա բիրդան, կասի. - Շան տղա, Զաչլիկ, ես քյե ոսկիք տվի, ասի՝ տար շինի, ես քյե չտվի ասի՝ առ տար կտռտի: Դե ջայինամ էլի, փյու իմ տուն պիտի ավերես:

Էսա Զաչալն ի, կասի. - Ուսթա, քյո դավին ի՞նչ ի, ես թե որ չիւր առատուն հազր չարի, իմ վիզ զարկ: Հալբաթ պիտի կտռտեմ, որ շինեմ, առանց կտռտելու ի՞նչխ կշինվի:

Ուսթեն ի, կասի. - Ջայինամ, ինչխ կելնի կելնի, հաքյի ուրիշ ճար էլ չի մնացե:

Կասի, կելնի, կերթա:

Զաչլիկն ի, կտիսնա որ ուսթեն կնաց, լուսու մոտ էլի, կխանի ծոցից էն ախչկան տված ծամ, կուտա կրակ, կասի. «Ես քեզնից կուզեմ՝ մեյ խատ ոսկուց թափսի մեչն էլ երկու խատ ոսկուց եղունիկ, էտա եղունկներն էլ մեչ էտա թափսուն խաղան, երթան են գյլեոխ, գյան են գյլեոխ»:

Աչկեր կխտի կպանա, տիսնա որ շինված գյեռ տրվե ուր սառած՝ թափսին, եղունկներն էլ մեչ:

Առատուն ի, ուսթեն խոգյին թրթփալեն կելնի, կուգյաս, կասի. «Երթամ խենքյ էսա Զաչլիկ ի՞նչ արեր ի»: Կուգյա կմտնի ներս, կտիսնա, որ ի՞նչ. Զաչլիկ շիներ ի, գյեռ թափսին եղունկներն էլ մեչ կերթան կուգյան, ինքյն էլ քուն տարե, պառկե վեր տազգյխին, քյնե:

Ուսթեն ի, կտիսնա որ ուր ուզածի պես խորոտ շինե, շատ կուրախնա, ուրախութեն Զաչլկին կխանե վեր, կպոնի ճակատ կպաքյի կասի. - Աշատի պիլաս, Զաչլիկ, փյու իմ կյանք ազատեցիր:

Էսա ուսթեն ի, կառնի ուրախ-ուրախ էտա թափսին, կերթա

թաքավորու սարեն, կասի. - Թաքավորուն ասեքյ որ ուր ուզած շիներ եմ:

Թաքավորն ի, կառնի կտիսնա որ աղորթմանց, շատ խորոտ պան էլի: Կխանի էտա ուսթին ռեռլ-բեռլ ոսկի կուտա, կասի՝ դե կնա:

Թաքավորն ի, կառնի էտա թափսին կերթա կտանի կդնի ուր խարսնցուի առաճ, կասի. - Էսա չէ՞ր քյո ուզած:

Ախչիյ կասի. - Խա թաքավո՛ր ապրած կենաս, էտա էր իմ ուզած, դե մկա խարսնիստ բաշլայի:

Ախչիկ կիտի, որ էտա շնորքյ ուր Սիրոնին ի:

Էն մեկել օր զաթի թաքավորու սարեն կդընտա: Թաքավորն ի, կանչե ուր բիթուն նազր-վազրներ, ինչ կանդար որ իշխան, դատական կա, կկանչի խարսնիս: Թաքավոր չմոռնա էսա ոսկրիճ ուսթեն, խաբար կէօրեռխկի, ինորն էլ կասի. - Արե խարսնիս, տյու իմ ոսկրիճ ուսթեն էլար:

Էսա ուսթեն ի, կհազրվի, որ էրթա թաքավորու տուն խարսնիս:

Էսա Չաչլիկն ի, որ կիմնա՝ կասի. - Ուսթա, ուսթա, ես էլ գյամ:

Ուսթեն ի, կասի. - Շան տղա Չաչլիկ, ես դո՞ր ի կերթամ, որ քյե տանեմ խեստ զիկ: Ես կերթամ թաքավորու տուն, ի՞նչխ կելնի էտա քյո Չաչալ գյլեռխ առնիմ, երթամ ենտեղ:

Էսա Չաչլիկն ի, շատ լադաճանքյ կենի ուր ուսթին կասի. - Ուսթա, ի՞նչ կելնի, կուգյամ քյո կողի մոտ, կմտնեմ քյո թևի տակ որ մարթ չտիսնա, ի՞նչ կելնի, գյամ մեյ խատ թամաշա անեմ:

Ուսթեն ի, կտեսնա որ Չաչլիկ շատ աղսուճանքյ կենի, թափսին էլ ինոր մարուֆաթովն ի, որ ինք թաքավորու ուսթեն էլավ, խաթր չի կոտրի, կասի. - Դե արե, Չաչլիկ, ի՞նչխ անեմ, գյեռ տյու ես:

Էն մեկել օր գյեռ կելնեն, կերթան թաքավորու տան խարսնիս: Խարսնսի մեչ տեղ թաքավորն ի ուր գյինու կադաչխ կառնի, կասի. «Իմ խրեր, ես էսա կաղաչխ կխմեմ իմ էն լաճու կենաց, որ իմ կնիկ ազատեց յոթ գյլխեն վիշապի ծեռնից, էսա զնջլով ինան էսա ախչկներ ազատեց պերեց, որ էսօր կպսակիմ իմ լաճերաց վերեն»:

Կասի, կխմի:

Էսա Չաչլիկն ի, որ կտիսնա էսա զնջիլ ուր ուսթի կոդից մեյ խատ գյախտիկմ կսղա, կելնի տյուս, կերթա էտա զնջիլ կառնի մեչ ատուն, մեյ խատ վարավուրդ կանի, կտառնա ուր ուսթին կասի. - Ուսթա, տես էսա զնջիլ ի՞նչ կանդար թիվեր ի:

Ուսթեն ի, որ կտիսնա էսա Չաչալ տյուս էկավ, թևից կառնի, կքյաշի, կասի. - Շան որտի Չաչալ, թե ես քյե ասի տյուս մի գյա, է:

Թաքավորն ի, մեյ խատ աչկ կինի էսա Չաչլու վերեն, կտիսնա որ էն զնջիլ քսան մարթ իրար չին կանա տա, էսա լաճ մեյ ծեռնով վիրուց իդիր: Որ կտիսնա, կասի. - Ա՛յ տղա, մեյ խատ արե տիսնամ, խենքյ տյու վո՞վ իս, տյու իմ պստիկ լաճու վոժ ունես:

Թաքավոր որ էսա խաբար կասի, համան էսա Չաչլիկ կխանի ուր

գյլխու կաշին, կթալի էն դիխ, կուգյա կկայնի էօդի մեջտեղ: Գյեռ դաոցե մեյ խատ սիրուն, սրմա ծամերով տղեմ:

Կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես որ կամ՝ քյո՛ լաճն իմ, քյո Սիրոն:

Կասի, զնջիլ կվերուցի կտառնա ուր խոր կասի. - Թաքավոր ապրած կենաս, ասա՝ վիր զանեմ, էքյի՞ն թե ոոցին:

Թաքավորն ի, կտիսնա աղորթ որ էսա ուր լաճն ի: Կասի. - Բալա՛մ, էքյեր քյե ի՞նչ ին արե, որ ինոնց կզանես, ինչ որ արեր ին, ոոցեր են արե, - կասի, - զարկ ոոցերաց:

Խետ ասելուն՝ զարկ ոոցերաց, Սիրոն ի համաճ կվերուցի զնջիլ, կզանի ուր ախպերներաց: Ախպերներաց ոտկեր բիթուն կկտուտի կթալի էնդիխ: Ըսկուն որ խարսնսի տուն կդառնա մեռլի տուն:

Կտանեն ախպերներ կխորեն չուր քյառսուն օր սորա, եվ սոքյից կպոծնեն, նոր թաքավոր խարսնիս կանի ուր պստիկ լաճ կպսակի վեր ուզած ախչկան, քյառսուն օր, քյառսուն կիշեր խարսնիս կանեն:

Սորա էսա թաքավոր կմեռնի, ուր թաքավորութեն կմնա ուր Սիրոն լաճուն: